ՀԱՍԱՑ — ՃԻՊԻԼ ՆՇԱՐ
ՓՈՂՈՑ. ՓՈՍԹՈՒՐԴ ԹԻՒ 152
ՀԱԼԷՊ, ՍՈՒՐԻԱ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԷՆ
ՏՕՔԹ. Խ. ՊՕՂՈՍԵԱՆ

ԵՓՐԱՏ
ՕՐԱԹԵՐԹ

جريدة يومية سياسية ارمنية
المدير المسئول بوغوصيان
العنوان — حلب — شارع جبل النهر
ص البريد ٣٨٢

ԿԻՐԱԿԻ 20 ՀՈՒՆՈՒԱՐ 1946 — ԹԻՒ — 2534 — ՁԵՒԲԷՔ՝ ՀԱՏ. 20 Ս. Դ.

الاحد ٢٠ كانون الثاني ١٩٤٦ — السنة ١٩ العدد ٢٥٣٤

ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ, ՆԱԽԱՏԵՍՈՒԵՐ Է ՄԵՐ ԳԱՂՈՒԹԻՆ ՆԵՐԳԱՂԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՆԵՐԳԱՂԹՈՂ ՀԱՅԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՒ ՏԵՂԱՒՈՐՄԱՆ
ԿՈՄԻՏԷ

«25» ԴԵԿՏԵՄԲԵՐ 1945

Ստորև կը ներկայացնենք այն նամակին պատճէնը, զոր ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՆԵՐԳԱՂԹՈՂ ՀԱՅԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՒ ՏԵՂԱՒՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԷՆ ղրկած է Լիբ. Ս. Հ. Բ. Մ.ի Նախագահ Պ. Հրանդ Տէվէճեանի, հրահանգելով որ Ներգաղթի Կոմիտէ մը կազմակերպուի, անմիջապէս գործի ձեռնարկելու համար։

ՅԱՐԳԵԼի ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ,

Ընդառաջ գնալով արտասահմանեան բնակուող Հայութեան բուռն ձգտումներին հայրենիք վերադառնալու մասին, Ս. Ս. Ռ. Մ.ի Կառավարութիւնը Հ. Ս. Ռ. Կառավարութեան միջնորդութեամբ, թ. Նոյեմբերի 21ին որոշած է կայացնել.— Թոյլատրել արտասահմանեան բնակուող և Ս. Հայաստան վերադառնալ ցանկացող հայութեան վերաքարձն իրենց հայրենիքը Ս. Հայաստանը։ Ս. Միութեան Կառավարութիւնը թոյլատրեր է միեւնոյն ժամանակ վերադարձող հայերին կատարել բնակարանային անհատական չինարարութիւն, յատկացնելով այդ նպատակի համար պետական վարկ կառուցուող բնակելի տների արժէքի 50 տոկոսի չափով։

Ս. Հայաստան վերադարձող բոլոր հայերը, կառավարութեան որոշման համաձայն, ազատուում են մաքսից իրենց հետ բերուող գոյքի նկատմամբ։

Հ. Ս. Ռ. Կառավարութիւնը այս խնդրի իրականացման համար Հ. Ս. Ս. Ռ. Ժողովրդական Կոմիսարների Սովետին կից ստեղծել է Արտասահմանից Ներգաղթող Հայերի Ընդունման և Տեղաւորման Կոմիտէ։

Արտասահմանից Ներգաղթող Հայերի Ընդունման և Տեղաւորման կոմիտէն, քննութեան առնելով արտասահմանեան հայրենիք վերադառնալու խնդիրը, եկաւ այն եզրակացութեան, որ արտասահմանում գործող հայկական բոլոր առաջադիմական և բարեգործական կազմակերպութիւններին համար չի կարող լինել այսօր աւելի կարեւոր և պատասխանատու խնդիր, քան արտասահմանում ապրող հայերի հայրենիք վերադարձնելու կազմակերպման գործը։

Արտասահմանում գործող հայկական առաջադիմական և բարեգործական կազմակերպութիւնները, որոնց աշխատանքը մինչեւ այժմ ընթացել է Սովետական Հայաստանի հետ կուլտուրական կապերը պահպանելու և գաղթօջախ հաստատուղ գումարներով Սովետական Հայաստանին նպաստներ կատարելու ուղղութեամբ, այժմ ըստ մեր կարծիքի պէտք է իրենց ամբողջ գործունէութիւնը ենթարկեն արտասահմանի հայերի Հայրենիք վերադարձնելու գործին կազմակերպման և ներգաղթողների նիւթական ապահովման հարցերին։

Ելնելով վերոյիշեալից, ՀՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետին կից Արտասահմանից Ներգաղթող Հայերի Ընդունման և Տեղաւորման Կոմիտէն նպատակայարմար է համարում, որպէսզի Ձեր գաղութում որտեղից առաջին հերթին է նախատեսուում ներգաղթի կազմակերպումը՝ կատարուելու հետեւեալ միջոցառումները։

1.— Ստեղծել Ձեր գաղութում ապրող հայերի Հայրենիք վերադառնալու գործի կազմակերպման կոմիտէ, որ իր վրայ պէտք է վերցնի վերադարձող հայութեան նիւթական ապահովութեան և վերադարձի կազմակերպման հետ կապուած բոլոր հարցերի լուծումը։ Մեր կարծիքով այդ կոմիտէն փաստաթղթերի պէտք է գործի Հ. Ս. Ս. Ռ. Ժողովրդական Կոմիսարների Սովետին կից Արտասահմանից Ներգաղթող Հայերի Ընդունման և Տեղաւորման Կոմիտէի տեղական մարմնի իրաւունքներով։ Նպատակայարմար է, որ ներգաղթի կազմակերպման տեղական կոմիտէն գլխաւորէ գաղութի հայկական առաջադիմական կազմակերպութեան ղեկավարները, որոնք ֆիզիկապէս գիտուող պայքարում ցոյց տուին իրենց նուիրուածութիւնը Սովետական Հայրենիքին և կազմակերպչական կարողութիւնները։

Կոմիտէի կազմը և հասցէն խնդրում են յայտնել մեզ։

(Շար. ը կարդալ Դ. էջ)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍՔ

Որոշ առենէ մը ի վեր, «յաւատեսութեան ալիք» մը, ահագին թափով, կը ծաւալէր Հայ հոգիներէն ներս։ Ու անշուշտ, այդ «ալիքը» իր լրումին պիտի հասնէր։ Եւ ՀԱՍԱՀ. «Մեր Հայրենիք» չեփորեց աշխարհի չորս ծագերուն, «իր հոգեհատորներուն» վերադարձի կանչը։ Գանուեցան մարդիկ, որոնք չեզոքացին հաւատալ-հաւատալ անոր, որ արձագանգը չատ մը ժամ եղաւ։ Արգարե՛ւ. օտարն իսկ, նատած մեր ուժգին եղաւ։ Արգարե՛ւ. օտարն իսկ, նատած մեր հայրենիքէն և հայ կեանքէն փարատեալներով հեռաւորութեան մը վրայ, զգաց իրականութիւնը, պարզորոշ իրականութիւնը։ Ու ահա՛, իր մտաւոլով, ան յայտնեց, և լոյս աշխարհին, թէ հայ ժողովուրդին ԱՆՈՐ ԱՐՇԱԼՈՅՍ մը կը բացուէր...։

Իսկ այս՛ը. ըսե՞նք թէ գերիւականութիւնն է, որ կը պատահի. Հայաստանի Աւտ. Գործոց Կոմիտէն վերջ է, որ կը կատարուի իրականութիւնը, սրբագո՛ն իրականութիւնը։ Պիտի գտնուի՞ն արդեօք մարդիկ, որոնք նորէն փակ պահեն իրենց սիրտին դուռները...։ Կամ ո՞րքան մարդիկ։

Իրապէս սրբագոն իրականութիւն։

Ամբողջ համաշխարհային պատմութեան մէջ՝ տեղազուգ դէպք։

Մենք կը յիշենք Սուրբ Գրքէն նման դէպք մը։ Մովսէս ժողովուրդը, տարագրութիւններու և տապալումներու դառն բաժակը լմնակէ վերջ, Փարաւոններու երկրէն կրցաւ ափ առնել հայրենի դուռներու առջեւ։ Իսկ Մովսէսի՞ն, քառասուն տարիներ անապատները թափառելէ յետոյ իսկ, չյաջողեցաւ՞ը պիանուռ երկիրը» տեսնել...։

Ինչպէս, ուրեմն, հայ ժողովուրդը չգնաց։ Եթէ ինք չաղաղակէ, «քարինք պիտի աղաղակեն»։ Մէկ և կէս միլիոն յօշոտուած մեր եղբայրներուն արեան կանչը կրնա՞յ լռել։ Ահա՛, այդ կանչն է, արգարութեան վրիժառու, չկորսուող ձայնն է, որ կը խօսի, կը պոռթկայ հայ սիրտերէն...։

Իսկ անոնք, որոնք «զգաստութեան» լեզուակով կանչեր կը հնչեցնեն, հայ խանդավառութիւնը «սանձելու» փորձեր կ'ընեն, հոգեբանական ու քնախօսական չատ պարզ տարբերան իրողութիւն մը կ'անգիտանան. մարդուն մին ու տկար գրաւած ձգտում մը, հոգեվիճակ մը՝ չի կրնար կամքին, ուղեղին հակակշռին ենթարկուիլ։ Թրտլմանները մեր պապայրերուն կան։ Ընթացք չտանք, որ մեր ժողովուրդին անկեղծ հայրենասիրութիւնը չարափոխուելիններու ենթարկուի։

«Աբշալոյս»ը կը չառագունի...։

Այս առթիւ, մենք աւելորդ չենք գտներ, կըրկնելու, ու մի՛ չափ կրկնելու մեր երախտագիտութիւնը Արաբ մեծ, ասպնջական և ազնիւ ժողովուրդին։ Այն ժողովուրդին, որ մեզ մահուան ձիրանուներէն ելնեց, և իր հողով ու չունչով մեզ անուագանեց։

Աւելորդ չենք գտներ, նմանապէս, մեր վիտակից երախտագիտութիւնը արտայայտելու ուռս մեծ ժողովուրդին և անոր մեծ առաջնորդին, որոնք մեզ պարգեւեցին այն, ինչ որ հայ ժողովուրդը չուներ գարերէ ի վեր այն, զոր փնտռելու մէջն էր. մանաւանդ այն, զոր երբե՛ք հաւանաբար չկարենար ունենալ։

Իսկ մեր հայրենիքի եղբայրներուն համար, ո՛ւէ փառաբանական արտայայտութիւն, արդէն մեր պտտիկութիւնը պիտի լլլար. մե՛ծ, տիեզերական գործութիւնները լռելեայն կը փափան...։

«Աբշալոյսը բացուեր է»...

Մահը սփոփողներուն և մահուան վրայ յաղթահարողներուն պարզելու։

Ու կրկնենք Ամերիկացի բանաստեղծին հետ։

«Մա՛հ, մի՛ հպարտանար, թէպէտ կոչած ես ըլլան ոմանք քեզ՝

Զօրաւոր և սարսափազդու, որովհետեւ այդպէս չէ՛ ու

Չի անունք, զոր կը կարծեն որ գետնեցիր,

Զե՛ն մեռնիր, քա՛զ մահ, ո՛չ ալ կընաս սպաննել զիս։

. . . . . .

Կարճ քունէ մը վերջ, մենք կ'արթննանք յաւիտենական,

Եւ Մահը ո՛չ գոյ է այլեւս. Մա՛հ, գուն պիտի մեռնե՛ս»։

«Երանի՛ անոնց, որոնք ջահանելով կը հաւատան»։

Երանի՛ հաւատացեալներուն...։

Մ. Պ.

Ծ. Խ.— Տեղի չգոյութեան պատճառով, մեր չաբաթական տեսութիւնը կարգալ յաջորդ թիւով։

ԱՑԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՅՍՏԱԿ ՏԵՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գրեց՝ Լ. ԹԻԽԹԻՆՅԱՆ

Օգոստոսը, որու մէջ ներկայացուցած էի Հայոց Ցեղասպանութիւնը, կը թելադրէ լինելի կարգը խորհրդածութիւններ. որոնք անպատեհ չեն կը թուին, ներկայ օրերուն երբ մեր գաղթականութիւնը ուրիշ հետապնդումներ ունի եւ վերջապէս անոր արդար լուծումը ընձեռնելու յոյսերով տարուած ենք։

Քանի մը կէտեր կան որոնք պէտք է լուսաբանուին այժմ դոնէ. որպէսզի մեր ժողովուրդը եւ անոր եկամուտ շրջանակները թելադրուին ըմբռնելու խնդիրը՝ որու վրայ մեր անկախութիւնները կրնան իմնուիլ։

Մեր մէջ որոշ չփոթութիւն մը տիրած է ցարդ, կարգ մը «խոստում»ներու մասին, որոնք, ըստ մեզի, իբրեւ թէ եղած են նախորդ պատերազմի շրջանին մեր հարցին լուծման առնչութեամբ։

Եթէ ընթերցողը ուշադրութեամբ կարգաց իմ յօդուածս, որուն մէջ գաղափարուած էին գաղնակից պետական մարդոց արտայայտութիւնները հայոց մասին, անշուշտ կրցաւ անդրադառնալ թէ այդ արտայայտութիւնները կապուած են որոշ թուականի մը հետ։ Այդ թուականը կամ շրջանը 1917-ի Ապրիլէն Յունիս է։ Հայոց մասին եղած արտայայտութիւնները օդէն առկախ խօսքեր չեն, անոնք կապ մը ունին ու օգն առկա խօսքեր չեն, անոնք կապ մը ունին եւ այդ կապը հեռու է դէպի մեզ երկարիլէ։ Այդ կապը քաղաքական գծով կ'երկարի դէպի Ռուսաստան։ Հայոց ճակատագրին մասին գաղնակից պատասխանատու մարդոց արտայայտութիւնները կը ներկայանան ոչ թէ իբրեւ «հայասիրական» խոստումներ, այլ փաստ մարդոց տարուած համաձայնութեան մը հիմքին վրայ ունեցած համաձայնութեան մը հիմքին վրայ ունեցած համաձայնութեան մը հիմքին վրայ ունեց

ՄՕՏԵՐ

ԳԱՂԹԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Պիտի խօսինք նիւթի մը մասին, որ չատ մեծ ու թաղի սպառած է, առանց ո՛եէ արդիւնքի հասնելու։

Արդարև չեղաւ մէ՛կը որ կարենար մատը դնել անոր վէրքին, ու խորհէը հիմնական գարմանի մը մասին դառն է ճակատագիրը բոլոր ճիգերուն, ո՛չ մէկ ջանքեր ու ծախսած են այս ուղղութեամբ։ Ու երիտասարդութեան վիրաբոյժը տակաւին չի՛ կրնար գործել իր կողմերը... Մինչեւ չունենայ պետական լուծո՛ւմ մը...։ Այժմ, փորձենք, քանի մը սեղմ գիծերու մէջ, դարձեալ Ներկան գաղջահոս երիտասարդութեան, ինչպէս նաև անոր Ապագան հայրենիքի համար։

ՆԿԱՆ

Այսօր՝ չորս ծագերուն ցրուած՝ ունինք անառարկելի թիւ մը հայ երիտասարդներու։ Կը խօսին թուրքերէն, արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն, իտալերէն...։ Կ՛ապրին թուրքերէն, արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն, չինարէն...։ Կ՛ըլլան թուրք, ֆրանսացի, անգլիացի, չինացի...։ Ա՛յս է ախտագիրը մեր երիտասարդութեան։ Ա՛յս կրնար ըլլալ...։ Ո՛չ... երբե՛ք... Ծանցո՞ւքը։ Բոլորիս...։ Ցաւ մա՛նաւանդ՝ մեր Ազգային կեանքը առաջնորդներուն, մեր ղեկավարներուն։ Որոնք ընդունակ չեն ժողովուրդ մը հաւաքելու և կարգի դնելու մէկ քաղաքի մէջ, մէ՛կ ճամբու վրայ, հայասիրութեան ու հայրենեաց ճամբուն վրայ։ Որոնք՝ հետու ու ճղճիմ հաշիւներու հետապնդման մէջ՝ չեն կարողացած ու չե՛ն փափաքած յաջող որոշել ազգնուրբի չահը, ու անոր սպառնացող վտանգը, մեծ ձեռնարկ ջարդը...

Այ՛...։ Այս չէ՛ր ըլլար գաղթահայութեան վիճակը խօսելով ու ապրելով հանդերձ թուրքերէն, արաբերէն, ֆրանսերէն...։ չէ՛ն ըլլար թուրք, արաբ, ֆրանսացի...։ Վասնզի երէ այդպէս ապրէլը մեզի պարտադրած էր մասամբ, սակայն երբե՛ք այդպէս ըլլալ մեզի չպարտադրեցաւ։

Պատասխանատուն ենթ մենք գաղթահայ երիտասարդութեան ներկայ անբաղձալի ու սխա՛լ վիճակին։ Որովհետեւ, օտարացած հայը, իր անցեալի հանգէսն կորուած նաեւ մէկ մըն է, որ կը ձգուի անդին քա՛ղ ծովուն...։ Որ կ՛արհամարհէ իր լեզուն ու պատմութիւնը, իր «հայկական գիմագիծը», ան նեռաւէտ չզգալուն անուններու եռանէն։ Որ նիւթականներու, սրճարաններու, պարարահներու, հեռաւներու, հրա՛ւ չուկաներու տոր ու մուրհակներ կը ալքայ, գուրս չ'ելլեր։ ու մարմինն ու հոգի կը փճացնէ նաեւ մէկ մըն է, որ մարմինն ու կարողութիւնը։ Որ տակաւին՝ նիւթի ու հացի խնայող վազքին մէջ՝ կը կորսնցնէ իր հոգին ազգային յատկութիւնները, մարդկային ազնի՛ւ յատկութիւնները, ու կը գառնայ մարդկութեան մակաբոյծ, չարաշահ ու գարչելի արարած...

Ահաւասի՛կ տիպը... որ մարմին է առեր մեր մէջ երիտասարդներուն մէջ, ու որ կը սպառնայ ոչնչացնել զանոնք։ Այս վերջիններու փրկու՞թ հաստատելու համար, մենք ունինք Ազգային մը հաստատելու համար, մենք ունինք Ազգային մը հաստատելու համար, մենք ունինք Ազգային մը

ԼՈՐՋԻՆ ԺԱՄ

Իսթանպուլ, 18.— Մօտ ատենէն, Սովիէթ Միութեան արտ. փոխ-գործավար Պրն. Վիշինսքի ներկայութեան մը պիտի ունենայ Թուրքիոյ արտ. նախարար Հ. Սաքայի հետ, Իսթամպուլի մէջ։

Լոնտոն, 18.— Այսօր կէսօրէ վերջ, Պրն. Վիշինսքի հոս կը սպասուի։

Լոնտոն, 18.— Իրանի Լոնտոնի դեսպանը, որ միաժամանակ Մ. Ազգերու Համագումարին պարբերական պատգամաւորն է, տեսակցութիւն մը ունեցաւ Սովիէթ պատգամաւորութեան հետ։ Հեղինակաւոր շրջանակները մեծ կարեւորութիւն կ'ընծայեն այս տեսակցութեան

ԴԷՊԻ ՀԱՑՐԾՆԻՔ

(Շար. Ա. Էջէն)

2.— Լայն կերպով տեղեկացնել գաղութահայութեան Մ. Միութեան եւ Մ. Հայաստանի կազմակերպութեան որոշումներուն մասին, արատահմանուած նպատակի վերագործի վերաբերեալ։

3.— Զեռնարկել Հայրենիք վերադառնալ ցանկացող հայերի ցուցակագրութեան աշխատանքներուն ապահովել այն քան կարելիոյն կարճ ժամանակամիջոցով վերադարձողներուն ցուցակները ցանկալի ձեւով։

Ցուցակագրութիւնը ապահովուց յետոյ ցուցակները մէկ օրինակը ինքզրում ենք ուղարկել մեզ։

4.— Բարեգործական եւ այլ կազմակերպութիւններուն կողմից հաւաքուող գումարներուն հաշուին հոգալ հայրենիք վերադարձող կարիքաւոր ընտանիքներուն հագուստի, ճանապարհածախսի, ճանապարհի, տնդի եւ ներգործիի հետ կապուած այլ գործերու։

Ցուցակները կազմելու ընդհպես նաեւ վերադարձի նախապատրաստման ընթացքում ծագող նորքերուց համապատասխան օժանդակութիւն ստանալու համար խորհուրդ կտայինք կապ պահպանել Սովիետական Պետութեան ներկայացուցչութիւնների հետ Ձեր երկրում։

Ձեր գաղութում ապրող հայերի վերադարձը լսելի կանգնելու ժամկէտների եւ ներգործութեան մասին, ինչպէս նաեւ ներգործիի կազմակերպման մանրամասն հրահանգը լրացուցիչ նամակով կը յայտնենք տեղական կոմիտէին։

Ներգործիի հետ կապուած բոլոր հարցերով, խնդրում ենք այսուհետեւ կապ պահպանել Հ. Ս. Մ. Ժողովրդական Կոմիսարիատի Սովիետին կից Արտասահմանից Ներգործող Հայերի Ընդունման եւ Տեղաւորման Կոմիտէի հետ, որը հանգէն հետեւելու է.— Ներեան, Կաւալարական տուն, Հ. Ս. Մ. Մ. Ժողովրդական Կոմիսարիատի Սովիետին կից Արտասահմանից Ներգործող Հայերի Ընդունման եւ Տեղաւորման Կոմիտէ։

Կոմիտէն համոզուած է, որ գաղութահայութեան մէկ գործող առաջին կազմակերպութիւնները, որոնք մեր Սովիետական Հայրենիքին նուիրուածութեան ընդհպես եւ կազմակերպչական ընդունակութեան ու փորձի բազմաթիւ օրինակները են տուել ֆաշիզմի դէմ մղուող պայքարի օրերին, այսօր էլ, ամենի մեծ եռանդով եւ նուիրուածութեամբ կը լծուին ներգործիի կազմակերպման, թէեւ ոչ գիւրին, սակայն պատասխանատու եւ շնորհալի հայրենասիրական մեծ գործին։

Ցարգանքներով՝

Հայկական Մ. Մ. Մ. Փոխվրդական Կոմիսարներու Սովիետին կից Արտասահմանից Ներգործող Հայերի Ընդունման եւ Տեղաւորման Կոմիտէի Նախագահ՝ Բ. Աստուածատուրեան

Նախագահի Տեղակալներ՝ Հ. Մարշանեան
Մ. Մաքսեան

Անդամներ՝ Ս. Կարապետեան
Ա. Մելիք-գազարեան

✱ 1.— Ազգանուն, անուն եւ հայրանուն։

2.— Ազգութիւնը կամ ընտանեկան դիակավարը հետ։

3.— Սեռը։

4.— Ծննդեան թիւը։

5.— Ծննդեան վայրը։

6.— Աքրիտասը։

7.— Կրթութիւնը։

8.— Հպատակութիւնը։

9.— Ինչով է զբաղում այժմ։

10.— Ինչ գոյք է ընդում իր հետ (անձնական օգտագործման գոյքացուցակութեան մէջ ինչեր կան)։

12.— Ինչո՞վ է ցանկանում զբաղիլ հայրենիքում (գիւղատնտեսութիւն, արհեստ եւ արտադրութեան մէջ, արհեստ եւն.)։

Ծանոթ — Սովիետ Հայաստանի Բարեկամներու Ընկերակցութիւնը՝ Լիքանանի Հայ Ազգային Մարմնոյին հետ ակամ է ձեռնարկել իրեն հրահանգուած Ներգործիի Հոմիտէի կազմութեան։ Անմիջապէս որ նախապատրաստական աշխատանքները լրանան, ժողովուրդը պիտի հրապարակ արձակուի։

ՍՈՒՐԻՈՑ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՑՔ ԱԶԳ. ՔՈՂՔԱԿԻՐՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Մ. ԱԶԳԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Սուրիոյ եւ Լիբանանի Հայ Ազգ. Մարմնոցը, երէկ, հեռագիր մը յղեց Մ. Ազգերու կազմակերպութեան Նախագահին։

Հեռագիրը, խօսելով այս երկու երկիրներուն 200,000 տարագրեալ հայերուն անունով, կը պահանջէ միացումը՝ Ս. Հայաստանին՝ թուրքերուն կողմէ անիրաւօրէն խլուած հայկական հողամասերուն։

Հեռագիրը կը յիշէ հայերուն բերած նպաստը, երկու մեծ պատերազմներուն, գաշնակից գօրին։

Մ. ԱԶԳԵՐՈՒՆ ՇԵՏ ԶՕՀԱՑՈՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ Ա. ՆԻՍՏԸ

ԼՈՆՏՈՆ, 18.— Երէկ կէսօրէ վերջ, բացուեցաւ Ա. Ենիստը՝ Մ. Ազգերու Ապահովութեան Խորհուրդին։ Նախագահ ընտրուեցաւ Աստրալիոյ ծովակալին Նախարար՝ Պ. Նօրման Մէլքին։ Նախագահը յիշեցնց, թէ իրենք Ուխտի սկզբունքներուն համաձայն պիտի գործեն։ Անկէ անդին չեն կրնար անցնիլ։

Այս Խորհուրդին գլխաւոր պարտականութիւնը՝ աշխարհի խաղաղութիւնը պահպանելն է։

Ան՝ միջազգային վէճերը պիտի հարթէ խաղաղասիրական միջոցներով։ Միջազգային յարաբերութիւններուն մէջ, պիտի չնչէ ուժի գործադրութիւնը կամ սպառնալիքը։ Պիտի ապահովէ Մ. Ազգերու համագումարի բոլոր անդամներուն վճռականութիւնը։ Մանաւանդ, պիտի հսկէ որ Մ. Ազգերու կազմակերպութիւնը իր գօրաւոր լսուի, կարենայ արգիլելու կամ նախնելու համար անհ նախալարձակ երկիր։

Իր անդամներն են.—

Նախագահ՝ Ն. Մէյլին (Աւստրալիա)։ Փոխդիպեր քարտուղար՝ Կլաուտիւ Ձէհլ, Վ. Ռըզվիովքի (Լեհաստան) (դուբսէն) Ա. Կրոմիքօ (Պուլղարիա), Պէվին (Մ. Բրիտանիա), Մեքենիւտա (Մ. Նահանգները), Բ. Վալ (Պրազիլիա)։ Ոսէլլինկըն Քոա (Չին), Ա. Համիտ Պասուսի Փաշա (Եգիպտոս), Վ. Օրլոյ (Ֆրանսա)։ Ի. Տիսէ (Մեքս.), Ջան Քլեճեան (Հոլ.)

ԱՒԱՂԱՆԻՔԵՒՆ ԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Փարիզ, 18.— Ամերիկեան կառավարութիւնը յայտնեց իր անհանգիստը Մոսկուայի վհատութեան մէջ որոշուած պաշտօնական մէկ հանդիպման չուրջ։ Երեք կը լսեն. կէսերը կան.—

Ա.— Ցրտնան պիտի մասնակցի Գերմանիոյ հետ կնքուելիք խաղաղութեան պայմանագրին։

Բ.— Ռուսաստանի վերահաստատուի 21 ապրիլեան յանձնարարութիւնները նկատի առնելու է։

Գ.— Ուրիշ երկիրներ ալ կրնան հրաւիրուիլ իրենց տեսակէտները յայտնելու, երբ անհրաժեշտ սեպուի։

ԿԱՐԾԱՑԵՆ ԹԷ ՏԱՐԱՆԵՑԻ

«Ե Փ Ր Ա Տ »Ը

ԿՐՕՄԻՔՕՈՑ ԵՒ ՅԱՌՈՒԱԾ

Լոնտոն, 18.— Միացեալ Ազգերու այսօր կէսօրէ առաջուան նիստին, Մ. պատուիրատուին առաջարկ պիտի Պ. Կրոմիքօ ճառ մը խօսեցաւ։

Ան չեշտեց ազգերուն իւրաքանչիւրը մարդ ազգու կազմակերպութեան մը, տեւական խաղաղութիւն եւ ապահովութիւն մը հաստատելու համար։ Ըստ աւելցուց թէ, առանց անկեղծ համագործակցութեան, չի՛ք խաղաղութիւն աշխարհի։ Արգելս, ըսաւ ան, 6 Նոյ. 1944-ին, ըսպասելին, կարեւոր ճառով մը, յայտարարած էր, որ մի՛ կազմակերպութիւն մը անհրաժեշտ էր, պահպանելու համար խաղաղութիւնը։

Անգրազանալով քանամատարութիւններու հարցին, յայտնեց Ռուսիոյ ամբողջական հաւանութիւնը, ու աւելցուց, որ քանամատարութեան սիսկէմը ազգերու անկախութիւնը կ'արգանդէ։

Ան չեշտը գրաւ, նաեւ, ֆաշիզմի հետքերը խափա չնչելու խնդրոն չուրջ։ Այս ուղղութեամբ Մ. Ազգերու կազմակերպութիւնը պէտք է անհրաժեշտ միջոցները պահպանելու մի՛ջոցները ձեռք առնէ։

Պ. Կրոմիքօ իր ճառը վերջացուց կրկնելով, որ Մ. Պատգամաւորութիւնը իր բոլոր կարելի պիտի ընէ, որպէսզի այս կազմակերպութիւնը կատարեալ յաջողութիւն մը ըլլայ։

Պ. Կրոմիքօյէն առաջ, խօսքը էին եուկոսլաւ, տոմինիկեան եւ Եգիպտական դեսպանները։

Ծանկանչական էր, մ՛իսկ, եուկոսլաւ պատուիրակ Տօքթ. Քարտէլի ճառը։ ան ըսաւ, թէ Ապահով. Մորհուրդը աշխարհի իրական պատկերը կը ցոլացնէ։ Ինչ ալ Պէվինի պէս չնչեց, թէ պէտք չէ սպասել որ 24 ժամէն աշխարհի երեսը փոխուի։

Ապա, անգրազանալով խաղաղութեան, յայտարարեց թէ խաղաղութիւն չի կրնար գոյութիւն ունենալ, մ՛ինչև որ եուկոսլաւիան՝ Գերմանիոյէն եւ իտալ-էն պաշտպանուած չըլլայ։

ԱՋԻԲ ԼՈՑՈՒ ՄԱՐՄԱՇԻՆԵՐՈՒՆ «ՆՈՂ ՄԱՐԱՇ»

(Պարբերագրիչք հայրենակցական, գրականութեան ու զեղարուեստի)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

Հրատարակութիւն՝ Մարաշի Հայրենակցական Վերաշինող Միութեան Հալէպի Մասնաճիւղին։

Տարին 150 էջ լոյս պիտի տեսնէ (5 թիւ)։

Չափը՝ 22½×15 սանթիմ.։

Տարեկան բաժնեգին՝ 700 ս. պ.
Զեռքէ հասը՝ 150 »

Բաժանորդագրուիլ փափաքողները կրնան գիմել հետեւեալ հասցէին՝

ՅԱԿՈԲ ՅԵԿՈՒՄԵՆՃԵԱՆ
ՊԱԳ.-ԷԼ.-ՇԱՄԱՇԱՏ—Հալէպ

(6—2)

ՀՐԴԵՀ Ի ՂԹԱԿԱՆՆԵՐ ԳԵՐԻ

Փարիզ, 18.— Հրեայ 900 պաղեստինցիներ վճռած են դարձեալ մը, որ իտալական նաւատնտեսի մը կուգայ, պաշտպանուելու պահանջով։ Անոնք ներկայացուցած են Հրեայ պահակախումբին կողմէ, եւ Հրեական նաւատնտեսը տարուելու է։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՍՏ

Ողբացեալ Ներքինացի Պրն. Գէորգ Մկրտիչեանի մահուան տարելիցին առթիւ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի յառաջիկայ Կիրակի յաջորդ Մ. Պատարագի Մ. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ։

Ազգականները եւ բարեկամները սիրով կը հրաւիրուին։

Սգակիրները
Տիկին. Նաճառեան, Տիկ. Հուսանեան եւ Տիկին. Քէչէչեան

ԾԱՌԵԼԻՆԱԿԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍ

Հայաստանեայց Աւետ. Ս. Կեղեցին, իր հաստատման հարիւրամեակին առթիւ, 1946-ը հռչակած է Ծառելինական Տարի, որու մ՛իջոցին տեղի պիտի ունենան շարք մը հանդէսներ։ Հալէպի Հայաստանեայց Աւետ. Եկեղեցիներու գործակցութեամբ բացման հանդէսը պիտի կատարուի Կ՛սմնուէլ Եկեղեցիին մէջ, Ազիզիէ յաւուրիկայ Ծուկ. 20 Կիրակի կէսօրէ ետքը ժամը 3ին։ Մուտքը ազատ է բոլոր Հայ ժողովուրդին։

Տասը տարեկանէն վար փոքրերու մուտքը արգիլուած է։

Պիտի խօսին՝

Տօքթ. Ա. Աւետեան
Տօքթ. Տիւր. Պէզճեան
Վեր. Տիւր. Արլոքեան

ԱՋԻԲ ԼՈՑՍ ԳՈՒԱԿՈՆԵՐՈՒՆ

Հալէպահայ ընտիրգասէր երիտասարդներուն, երկար ատենէ է վեր, գոց կը մնար մեր Անկղիոյի Հայրենակցական Միութեան գրադարանը։ Սակայն, այսօր վերաբացուած է ան, աւելի նոր գրքերով, Հալէպահայ Հայրենակցուհի Միութեան ամկամբը։ Բաց է ամէն Հինգշաբթի իրիկուն եւ ամէն Կիրակի կէսօրէ առաջ։ (5—2)

ՄԱՄՈՒԼ ՆԱՆԱՒԹ

Մամուլ է փաթրաբալի խանութ մը, Պրն. Մանուել Հէլվաճեանի, որ կը գտնուի Ֆիզ Ճըսէյտէյի ըներան Նայլէի կողմէն (Պուլսպուէլ խալ)։

Ամէն արհեստի համար չատ յարմար։

Փափաքողները կրնան գիմել ուղղակի իրեն կամ յարաբերութեան։ (3—2)

ՀԱՄԱՅԱՐԵՐԻՏԱՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հալէպի համայարերիտասարդական Միութեան ընդհ. Անդամական ժողովը տեղի պիտի ունենայ առաւիկայ Կիրակի 20 Ծուն. կէսօրէ վերջ ժամը 2ին, Հ. Ը. Ը. Միութեան Ակումբը։ Ազիզիէ։

Կը հրաւիրուին 18 տարեկանէն վեր եղող բոլոր հալէպահայ նահկինները։ Ներկայութիւնը մեծ մեծամասնութեան պիտի նպաստէ։

Վարչութիւն

ԹՈՒՎԱԲԱԿԱՆ ԼՍԱՐԱՆ

Բեռել Շըղնակի

Լսարանի հերթական նիստին Սմբելինգրատի Պատմական Դերը

Բանախօս՝ Տիար Ն. Ծովհաննէսեան։

Ծուն.վը 20, 1946 Կիրակի Գ. Ա. ժամը 10.15-ին, Մանկապարտէզի սրահին մէջ։

Մուտքը ազատ

Վարչութիւն